ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРМАВИРА

«25»-----07---------- 2009 թ. N ---

Սա/ 0602

# ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ՄԻՋԵՎ*

Սույն համաձայնագիրը կազմվել է հարևան և բարեկամ երկու երկրների՝ Հայաստանի Հանրապետության՝ հանձինս ՀՀ Արմավիրի մարզպետարանի և Իրանի Իսլամական Հանրապետության՝ հանձինս Արևմտյան Ատրպատականի նահանգի միջև /հետագայում՝ կողմեր/ հետևյալ մասին.

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ

1. Կողմերը հաստատում են 29.05.2009 թվականին Արմավիրի մարզպետարանի և Արևմտյան Ատրպատականի նահանգի ֆիզիկական կուլտուրայի գլխավոր վարչության ստորագրած հուշագրի դրույթները՝ սպորտային և մշակութային համագործակցության վերաբերյալ և սահմանում են գործնական նախադրյալներ դրանց իրագործման համար:
2. Կողմերը հաստատում են երկու մարզերի հետագա համագործակցությունը գյուղատնտեսության բնագավառում, մասնավորապես՝ ցանքատարածքների իրացման և ագրոտեխնիկական կանոնների ուսուցման, անասնապահության,

թռչնաբուծության, մեղվաբուծության, ձկնաբուծության, այգեգործության և այլ ոլորտներում, այդ թվում նաև մասնավոր և պետական ոլորտներում փորձի փոխանակման կազմակերպմամբ:

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանը հայտնում է իր պատրաստակամությունը ձեռք բերելու գյուղմթերքների արտադրության համար անհրաժեշտ սերմացուներ, մինի տեխնիկա և պարարտանյութեր, ինչպես նաև աջակցել Արմավիրի մարզում ստեղծելու գյուղմթերքների վերամշակող կազմակերպություններ:
4. Կողմերը հաստատում են իրենց համագործակցությունը էկոլոգիայի բնագավառում, այդ թվում բնական պաշարների պահպանման և շահագործման ոլորտներում, հատկապես Արաքս գետի շահագործման և բնապահպանության մաքրության աշխատանքներում՝ կազմակերպելով այդ ոլորտներում կազմակերպությունների համագործակցված աշխատանքը:
5. Կողմերը հաստատում են իրենց համագործակցությունը առևտրա-տնտեսական ոլորտներում, այդ թվում առևտրա-արդյունաբերական պալատների, մասնավոր կազմակերպությունների ներգրավմամբ՝ դրա իրականացման ընթացքում ներգրավելով կողմերի համապատասխան ներուժը առևտրի, ներդրումային ծրագրերի իրականացման ոլորտներից՝ ցուցահանդեսների կազմակերպման միջոցով:
6. Կողմերը աջակցում են պետական և մասնավոր ոլորտների կազմակերպությունների համագործակցությանը մշակույթի և տուրիզմի բնագավառներում՝ այդ թվում կազմակերպելով արվեստի գործերի, թանգարանային նմուշների և խմբերի ցուցահանդես և փոխանակում, իսկ տուրիստական խմբերի այցերի համար սահմանում են հատուկ ավտոբուսային երթուղիներ:
7. Կողմերը աջակցում են բուհական և այլ ուսումնական հաստատությունների դասախոսական և ուսանողական կազմերի միջև փոխադարձ սեմինարների և գիտական այցերի կազմակերպմանը, այդ թվում նաև համատեղ հետազոտական ծրագրերի իրականացմանը, ինչպես նաև ուսանողական կազմերի միջև սպորտային միջոցառումների կազմակերպմանը:
8. Կողմերը պատրաստակամություն են հայտնում կազմակերպելու քաղաքապետերի երկկողմանի համագործակցության աշխատանքները՝ փորձի փոխանակման միջոցով:
9. Սույն փոխըմբռնման հուշագրի վերոհիշյալ դրույթների իրագործման, ինչպես ընթացիկ առաջարկությունների նախապատրաստման համար

կողմերը, համապատասխան պաշտոնատար հինգ անձերից բաղկացած, հանձնաժողովներ են ստեղծում: Այդ հանձնաժողովների համատեղ նիստերը տեղի են ունենում առնվազն տարին մեկ անգամ, ըստ հերթականության Իրանի Իսլամական Հանրապետության Արևմտյան Ատրպատականի նահանգում և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում, որտեղ քննարկվում են սույն փոխըմբռնման հուշագրի դրույթների իրագործման ընթացքը:

Սույն փոխըմբռնման հուշագիրը բաղկացած է իննը կետից, չորս օրինակից, պարսկերեն և հայերեն լեզուներով, ստորագրվում են 25 հուլիսի 2009 թվականին, Ուրմիա քաղաքում: Բոլոր չորս օրինակներն էլ հավասարազոր են:

| | |
|---|---|
| **Հայաստանի Հանրապետության** | **Իրանի Իսլամական Հանրապետության** |
| **Արմավիրի Մարզպետ** | **Արևմտյան Ատրպատականի Նահանգապետ** |
| **Ա. Ղահրամանյան** | **Ռահիմ Ղորբանի** |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРМАВИРА

«26» 05 2009 թ. N 1350

Ա/ 0602

## ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

### *ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Սույն համաձայնագիրը կազմվել է հարևան և բարեկամ երկու երկրների՝ Իրանի Իսլամական Հանրապետության Արևմտյան Ատրպատականի նահանգի ֆիզիկական կուլտուրայի գլխավոր վարչության և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի միջև՝ սպորտային և մշակութային փոխհարաբերությունների տարածման ու ամրապնդման ուղղությամբ, որը 2009 թվականի մայիսի 26-ին ստորագրվեց Արմավիր քաղաքում:

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ

1. Կողմերը սպորտային հետևյալ՝ եվրոպական ազատ ըմբշամարտի, ձյուդոյի, բռնցքամարտի, ձեռքի գնդակի, չախմատի, վոլեյբոլի, թեքվանդոյի, կարատեի, սեղանի թենիսի, մարմնամարզության, սուսերամարտի, հրաձգության և սպորտի այլ ձևերում, համաձայնվեցին թիմերի փոխանակման վերաբերյալ:
2. Կողմերը, բացի վերոհիշյալ մարզաձևերից, մրցումների կազմակերպման բնագավառում և սպորտային այլ ձևերում՝ ընկերական հանդիպումներում նախնական հրավերով, կհամագործակցեն:

3. Կողմերը կհամագործակցեն երկու երկրներում միասնական հավաքներ կազմակերպելու վերաբերյալ:
4. Կողմերը կհամագործակցեն փոխադարձաբար մասնակցելու երկու տարածաշրջաններում տարբեր առիթներով կազմակերպվող սպորտային փառատոներին և մրցումներին:
5. Կողմերը կհամագործակցեն մրցավարների և մարզիկների ուսուցման և այլ հարցերի կազմակերպման բնագավառներում:
6. Կողմերը կհամագործակցեն մարզիկների և մասնագետների փոխանակման բնագավառներում:
7. Կողմերը պարտավորվում են հյուրընկալ երկրում մուտք գործելու պահից մինչև դուրս գալը՝ թիմերի սննդի ամբողջ ծախսերը՝ կացարանը և մեկնումն ու վերադարձը, ապահովել:
8. Կողմերը պարտավորվում են հրավիրյալ թիմին, սահման մուտք գործելուց և ճամփորդության ավարտից հետո, մինչև նպատակային սահման ուղեկցել:
9. Կողմերի մրցույթներում մարզական թիմերի ներկայությունը հնարավոր կլինի նախնական հրավերի հիման վրա:
10. Ուղարկվող հրավերում պետք է նշվի /հայտարարվի/ մրցումներին մասնակցելու պայմանները:
11. Որոշում կայացվեց կողմերի մարզական թիմերի և հանձնաժողովների մեկնման ու վերադարձի դյուրացման նպատակով անվճար անցագրերի առաքման խնդիրը սեփական պետությունների իրավասու պատասխանատուներից խնդրել և հանձնառու լինել փոխադարձը կատարելու պայմանով:
12. Փոխըմբռնման այս հուշագիրը կազմվել է երկու օրինակից՝ հայերեն և պարսկերեն լեզուներով: Երկու տեքստերն էլ հավասարազոր են:

| | |
|---|---|
| Իրանի Իսլամական Հանրապետության Արևմտյան Ատրպատականի նահանգի ֆիզիկական կուլտուրայի գլխավոր վարչության կողմից | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կողմից ՀՀ Արմավիրի մարզպետ |
| *Ալի մոլլա Սիմադի* | *Աշոտ Մարգսի Ղահրամանյան* |